

ԶՈՒԱՐԹՆՈՅՑ ԲԵԼԻՇՈՎԳՐԻ ԱՌԻԹՈՎ

S. Մեսրոպ վարդապետ «Ազգագրական Հանդէսի» XV գըրքում (1907թ. Յունուար) խօսելով՝ ի միջի այլոց՝ Զուարթնոց եկեղեցու տւերակներից զուրս բերուած բիեռագիր տրձանագրութեան մասին, ասում է (եր. 124), թէ «բնենուագրագէտներից միայն պ. Բասմանեանն է գժուար վերծանելին վերծանելի համարել և արձանագրութիւնը ծայրէ ի ծայր կրտքացել, միայն մի տեղ հարցական նշան գնելով (Արարատ, էջ 225, 226) միւսները խիստ զգուշաւոր՝ առ այժմ տուել են արձանագրութեան ընդհանուր միտքը»:

Եկեղեկ թէ S. Մեսրոպ վ. կամ միայն «Արարատ» ամսագրի մէջ տուած մեկնութիւնս է ի նկատի ունեցել, և կամ պ. Լեմանի իւմ մեկնութեանս մասին արած քննադատութիւնից ազդուել:

«Արարատ»-ի մէջ տուած մեկնութիւնս զրի առել եմ նոյն Զուարթնոց աւերակներում, առանց ձեռքի տակ ունենալու այդ նիւթի վերաբերեալ գրքերու ու տետրակներու, ուրիմ առանց գործիքի. իսկ երբ Պարիզ վերագարձել եմ, «Բանասէր» հանդէսիս մէջ հրատարակած եմ նոյն արձանագրութեան մասին պատմական և լեզուաբանական տեղեկութիւններով հանդերձ մի նոր թարգմանութիւն¹), որ առանձին ալ լոյս տեսած է: Այս երկրորդ թարգմանութեանս մէջ հարկ եմ համարած հարցական նշաններով, թուով ութ²), որոշել բնագրի այն մասերը՝ որոնք մեր ունեցած աղքատ բառամթերքի շնորհիւ կարելի չէ բացարձակ կերպով մեկնել, այլ կարելի է տալ մօտաւոր իմաստ մը. նայած քովի պարբերութեան պահանջման: Այսպէս մեկնուած են բոլոր հին ազգերի վերաբերեալ անծանօթ արձանագրութիւնները:

Գալով պ. Լեմանի քննադատութեան, որ լոյս է տեսել ZDMG թերթում (1902, եր. 101), իր արժանի պատասխանն ստացել է իր ժամանակին թէ հոչակաւոր ընենուագէտ Պայզէրից (F. E. Peters) և թէ ինձանից: Դոկտ. Պայզէրի ըննադատութիւնը պ. Լեմանի քննադատութեան մասին՝ լոյս է տեսել Orientalische Litteratur Zeitung հանդէսի 1902թ. մարտի 15 համարում (եր. 131). իսկ

¹⁾ Տես «Բանասէր» 1901, հատոր Գ եր. 33—40:

²⁾ Տեսնել նոյն տեղում, տողեր 9, 12, 17, 21, 22, 25, 45, և 46: Մի և նոյն արձանագրութեան Ֆրանսերէն մեկնութեանս մէջ (La stèle de Zouarhnotz. Paris 1901), որ գիտնական հասարակութեան ուղղուած է, հարցական նշաններուս թիւը բարձրացրել եմ տասնենեկի, ինչպէս կարելի է ստուգել այս Ֆրանսերէն հրատարակութիւնս աչքի առջև առնելով:

իմ պատասխան-քննադատութիւնս լոյս է տեսել աշխարհանոչակ եղիպատարան և իմ ուսուցիչ Մասպերօս (G. Maspero) տնօրինութեամբ հրատարակուող Recueil de Travaux relatifs à la Philologie et à l'Archéologie égyptiennes et assyriennes հանդէսի 1902 թ. 3-4 միացեալ համարում (եր. 197—198):

Խնդրում եմ, որ այս նիւթով հետաքրքրողները նեղութիւն յանձն առնեն զիմել ցոյց աւոծ աղբիւրներիս, որոնք որոշ կերպով կը պարզեն թէ ի՞նչ արժէք ունի պ. Լէմանի բննագատութիւնը:

Կ. 8. Բասմաջեան

Պարփակ.



ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊՌՕՇԵԱՆ

Ազգագրութիւնը և ցեղագրութիւնը կոչումն ունին ոչ միայն վերաբարեկ նկարագրելի ազգի բնիկ դրոշմը, որով նաև նման և տարբեր է միւսներից, այլ և նա այդ դրոշմը իւր այս ու այն զծերով պատկերացնելով՝ առատ և ճշգրիտ նիւթ է մատակարարում գրչի արուեստով պարագուողներին, գեղարուեստի մշակներին՝ իրենց մրցանքի առաջարկուում:

Այդպէս, ազգագրութիւնը խուզարկութեամբ և քննական հետազոտութեամբ որոնում ու որոշում է ազգերի ազգակցութիւնը, ազգակցութեան հետաւոր ու մերձաւոր աստիճանները. քաղաքակրթական յարաբերութիւնները, քաղաքակրթութեան ընթացքը՝ ազգից դէպի աղդ անցած, մի ազգի առաջնորդիւնը քան միւսը, մէկի միւսից սերուելը, կեանքի յառաջխաղացութեան ընթացքում նոցա քաղաքակրթական մրցանքը, ազգագրութիւնն յառաջ է բերում այդ բոլորը և ձգտում է այդ բոլորի վրայից փետ թանձր գտրերի փոշին:

Եւ երբ նա միանգամ այդպէս կը շողացնէ այդ բոլորը, այն ժամանակ միայն թերևս կարելի կը լինի ճշտիւ իմանալ բնիկ արմատն ազգագրական բազմազարուստեան ծառի, ծագումն ու տեղը նախնական մարդու, սերումն ու ազգանալը, ցրիւ զնալ. և այս ու այն տեղ զաղութ զնիելով բազմազգանալը, այդ ցրիւ գնալու ճիւղաւորուելու շաւիղները մինչև բնակելի երկրի ծայրա-